

Փարիզի մէջ լոյս ընծայուած այս պարբերագիրքը — միամտայ պարբերականութեամբ — իր անունով իսկ արդէն դժուարութիւն կը բերէ ընթերցողին: Անունը հայերէն պիտի թարգմանուէր «անհանգիստը», բայց դուրս կու գայ որ բառը ֆրանսերէնի մէջ գոյութիւն չունի: Ասիկա նշանակութիւն մը չունի, անշուշտ. պարբերագիրք «կէ խօսի» չգոյութեանէն, լուսանցքէն, կը ծառանայ պետութեան կողմէ անհատի ճգնման դէմ, ինչպէս իր ներածական ուսումնասիրութեան մէջ կը շեշտէ խմբագիրը՝ Ֆիլիպ Պուշըրո: Այդ ընդդիմութիւնը քարոզչական նկարագիր չունի, այլ՝ իմացական, ակադեմական:

Պուշըրո, մասնագիտութեամբ փիլիսոփայ, 1989ին հրատարակած էր Հայաստանի ժողովրդավարական շարժումին նուիրուած ուսումնասիրութիւն մը՝ Փ. Ռ. Մերսիէ գրչանունով, իսկ յաջորդ տարին Հայաստանի եւ Ատրպէյճանի լճացման եւ փոխակերաման հողվոյրներուն նուիրուած միջազգային գիտաժողով մը կազմակերպած էր՝ «Աշխարհի Բժիշկներ» հաստատութեան հովանաւորութեամբ:

«Ստրկութեան քննադատութեան ազատ նըպաստ մը» կոչումով այս պարբերագիրքը, շուրջ 400 էջոց, այդ ծիրին մէջ կը հրատարակէ ուկրանացի Տանիօ Շումուկի յուշերը՝ Կուլակի մէջ իր ապրած 42 տարիներուն եւ գլխաւորած ապստամբութիւններուն, եւ երեք հեղինակներու (Մարթին Կիլօմ, Պ. եւ Ռ. Պուլպօշ) ուսումնասիրութիւնը՝ Չերնոպիլի աղէտէն ետք վիճակին ու իսկական հետեւանքներուն մասին:

Պիտի կեդրոնանալով երկու ծաւալուն յօդուածներու վրայ, որոնք անկասկած ժողովածուի «ծանր հրետանին» կը կազմեն իրենց բերած նորութիւններով ու գիտական հարցադրումներով:

Մարկ Նշանեանի «Զոհագործութեան կայսրութիւնը» (էջ 61—115) իր աւարտին կը հասցնէ կարեւոր նիւթ մը. արեւմտահայ մեծանուն վիպագիր Յակոբ Օշականի դրած «արդիական սկզբունք»ի հարցը: Առաջին անդրադարձը «Վէպը եւ արդիական սկզբունքը» յօդուածն է, որուն Ա. մասը միայն լոյս տեսած է հայերէն («Բագին», Յունուար-Փետրուար 1983): Նշանեան ֆրանսերէն գեկուցում մը ներկայացուցած է «Աշխարհի Բժիշկներ»ու վերոյիշեալ գիտաժողովին (տե՛ս «Յառաջ Միտք եւ Արուեստ», Յուլիս 1990), որուն յանգումն է այս յօդուածը:

Հնու կիզակէտը Օշականը չէ. մեկնելով անոր հաստատումէն, թէ «մեր ժողովուրդը եղաւ գետինը ուր թուրքերուն բնագոյները եւ մեր ժամանակի սկզբունքները արձակ ասպարէզ գտան» (տե՛ս ամբողջական հատուածը «Մանցորդաց» վէպին մէջ), հեղինակը

վիճարկէ Աղէտի պատմա-քաղաքական մեկնաբանութիւնները եւ խնդրական կը դարձնէ հրէական Ողջակէզի երեւութապէս «եզակի» բնոյթը:

Այդ մեկնաբանութիւնները Հայկական Յեղափոխութիւնը կ'ընկալեն որպէս թուրք ազգայնականութեան արդիւնք (Իվ Թերնոն, Ժեռար Շալեան), ազգայնականութիւններու գարթօնքի հետեւանք (Թէոտոր Ատորնօ), թուրք եւ հայ ազգայնականութեան բախումի եզրայանգում (Պերնըրտ Լուիս), հողային յափըշտակում (Իվ Թերնոն). կու տանք Նշանեանի մէջբերած հեղինակները: Մասնակի քննադատութիւն մը փորձած են Ժիրայր Լիպարիտեան եւ, անի խորագնաց կերպով, Ռուզբը Մելսըն:

Մարկ Նշանեան կը ճշտէ այս բոլոր դիրքորոշումներուն անբարարութիւնը հասկնալու համար, որ կայսրութիւն մը հիմնուած է գոհագործական համակարգի մը վրայ: Երբ համակարգը ճզմածամի մէջ կը մտնէ, անպարագրկելի բրտութիւնը երեսն կու գայ ջրնջելու համար համակարգն ու անոր ենթակայ ժողովուրդները, անցնելու կայսրութեան դէպի պետութիւն, այսինքն, արդիականանալու: Կը ջնջի նաեւ տարբերութիւնը, տարբերութեան իրաւունքը, եթէ հետեւինք ֆրանսիացի փիլիսոփայ Անրի Կլիքսմանի դիտողութեան. —

«Չփոխտողը պետութեան պաշտամունքն է: Երիտթուրքերը՝ աշխարհական, ազգայնական, ժողովրդավար, արդիական պետութիւն մը կ'ուզէին կերտել հին Օսմանեան կայսրութեան ւտերակներուն վրայ: (...) Հայերը մշակութային (...) կրօնական եւ տնտեսական (...) ուժով ձուլման ենթակայ չէին: Իրենց սուկական ներկայութիւնը անթափանց շրջան մըն էր քարձր վերահսկողութեան (պետութեան. Վ. Մ.) թափանցիկ միջոցին մէջ»:

Հաշուի պէտք է առնել, ի դէպ, որ դեռ 1876—77ին մեծ վեգիր Քեամիլ փաշա կը խօսէր հայերը բնաջնջելու մասին՝ Եւրոպայի միջամտութեան կողմն չտալու համար: Կայսրութիւնը պէտք չէ անդամահատուէր. հայերու մաքրագործումով, կը ստեղծուէր անհրաժեշտ միատարրութիւնը եւ Թուրքիա կը դառնար արդիական ազգ-պետութիւն մը:

Յիշեալ կէտի կողքին, անցնենք նաեւ, որ Իթթիհատի կազմի քննարկումը ցոյց կու տայ, որ բաղկացած չէր «մաքրութիւն» թուրքերէ: Պատմականօրէն յայտնի այս կէտը կը յուշէ, որ երիտթուրքերը շահագործած ու հրահրած են ո՛չ միայն կրօնական, այլեւ՝ ազգային զգացումները: Հայկական Յեղափոխութիւնը իրագործուած է վերնազգային շահերէ առաջնորդուած խմբակի մը ծրագրումով. ազգէն գերիվեր, հետեւաբար՝ պետական:

Ինչ կը վերաբերի հողային յափշտակումի

վարկածին, հասկնալի է որ ան Յեղասպանության երկրորդական հետեւանքն էր եւ ո՛չ՝ մեկնակետը: Այդ վարկածը յառաջ եկած է Հայ Դատի տարածքային երեսակի առկայութենէն:

Գալով Ողջակէզի եզակիութեան, արդէն Վահագն Տատրեան իր նորագոյն ուսումնասիրութիւններով հարցականի տակ դրած է զայն: Նշանեան հարցին կը մօտեցայ այլ դիտանկիւնէ մը:

Ողջակէզի բոլոր մեկնաբանները կը շեշտեն դէպքին ոչ-գաղափարախօսական մեկնակետը (Փիեռ Լաքու-Լապրոթ), ոչ-շահադիտական բնոյթը (Հաննա Արեւոտ), յանգելու համար եզակիութեան դրոյթին: Մ. Նշանեան ցոյց կու տայ, որ այս երկու նախադրեալներն ալ գոյութիւն ո՛ւնին Հայկական Յեղասպանութեան պարագային: Յեղասպանութիւնը ազգայնականութեան ծնունդ, այսինքն, գաղափարախօսական չէ, իսկ հայկական հողերը արդէն կայսրութեան կը պատկանէին, այսինքն, Մեծ Եղեռնը շահադիտական բնոյթ ունեցած չէ: (Մեր կողմէ յիշենք, որ մինչեւ 1919 թուականը հայկական կուսակցութիւնները միայն քարեհորդումներու կամ ինքնավարութեան մասին կը խօսէին իրենց ծրագիրներում մէջ): Հետեւաբար, հրեական Ողջակէզը կը կորսնցնէ իր եզակիութիւնը:

Փորձելով այս համատու խտացումը, կ'ուզենք նաեւ ընդգծել, որ անկիւնադարձային այս ուսումնասիրութիւնը Յեղասպանութեան մեր ընթացիկ պատկերացումը կը փոխէ: Կը դառնայ քացառաբար «մարդկութեան դէմ ունի մը», որ իր բնոյթով իսկ կը կանխէ եւ կը ներշնչէ նացիական քարքարոտութիւնը, այդ իսկ պատճառով՝ շատ անելի ազդեցիկ եւ տիեզերական: Ոճիրին տարողութիւնը կը մեծնայ անհամեմատ կերպով, մինչ հողային պահանջն ու վնասուց հատուցումը կը գտնեն իրենց տեղը:

Համիտ Պոզարյանի յօդուածը՝ «Պատմութեան Թրքական Տեսութեան» շուրջ» (էջ 119—150), նախաբանն է քաղաքական գիտութեանց թուրք մասնագետի մը՝ Իսմայիլ Պեշիկեանի ֆրանսերէն հրատարակելի թարգմանութեան («Պատմութեան Թրքական Տեսութիւնը եւ քրտական հարցը»), որուն թրքերէն բնագիրը լոյս տեսած է 1977ին: Պեշիկեանի գիրքերը հիմնական մէկ ճիւղ ունին. քեմալականութիւնը: Այդ իսկ պատճառով, անելի քան քսան տարիներէ ի վեր, ընդմիջումներով, թրքական բանտերու «հիրն» է:

Պոզարյանի ճիւղը հայ ընթերցողին յայտնի է. 30-ական թուականներու սկիզբը Քեմալ Աթաթիւրքի հաստատած պաշտօնական այն տեսութիւնը, ըստ որուն թուրքերը մարդկութեան ու քաղաքակրթութեան: Հեղինակները ընդհանրապէս գոհացած են մէջբերելով երիտթրքական ու քեմալական շրջանէն նմուշներ, ընդունելով «ազգայնամուլ» տրամադրու-

թիւններու գոյութիւնը: Այս յօդուածը շատ անելի հետու կ'երթայ:

Հեղինակին համաձայն, Իթթիհատը կոչուած էր ստեղծելու թուրք ազգը— որ մինչ այս գոյութիւն չուներ— պետութեան ընդմէջէն: 1909—1918ին, օսմանականութիւնը կը մեռնի. կարգը կու գայ Իսլամին, քայց ան նախ կը մահմետականացնէ Թուրքիան, բնաջնջելով ու վտարելով հայեր եւ յոյներ: Կը կերտուի միատարր թուրք պետութիւնը. այսպէտով, ճամբայ կը քացուի աշխարհականացումին, այսինքն, արեւմտակարգ մին ու արդիականացումին:

Ինչպէս կը նկատէ ընթերցողը, Պոզարյանն աւելաբար կը յանդիմանայ Նշանեանի նոյն տեսակետին. արդիականացումը (կայսրութենէ դէպի պետութիւն անցումը) տեղի կ'ունենայ բնաջնջումի գործողութեանը:

Քանի որ քեմալական պետութիւնը ընկերային եւ տեսական հիմքերով շատ փխրուց էր, կը փորձուի անոր հզօրացումը կուսակցութեան եւ պետութեան միացումով, ինչպէս եւ պետութեան փոխանցելով ազգային ներկայացուցչականութիւնը: Այսպէս կոչուած «արդիական», «արեւմտականացած» եւ «ժողովրդավար» Թուրքիան 20րդ դարու ամբողջատիրութեանց ուղիէն կը քալէ:

Թրքական հայրենիքը Կեդրոնական Ասիան չէ այլեւս, այլ՝ Անտառլիան: Այս «հրողութիւնը» հաստատելու համար կը կատարուի յուշագրկումի փորձը, պատմութեան վերագրումը, որմէ կը ծագին մեր ակնարկած տեսութիւնները: Ասկէ, նաեւ, քրտերէնի արգիլումը մինչեւ 1991, որովհետեւ «քիւրտ աւատատիրութեան» կողմէ պարտադրուած էր... «թուրք» (իմա՝ քիւրտ) շինականներուն վրայ:

Ինչպէս որեւէ ամբողջատիրութեան պարագային, միայն գրաքննութիւնը եւ մտատրական կաշկանդումը կրնային պարտադրել այս բոլորի ընդունումը: Բայց, յամենայնդէպս, Պոզարյանի համաձայն, թրքական ազգ-պետութիւնը ոչ եւս է, գոնէ քեմալական ընտրանիի ծրագրած ձեւով: Բոլոր պետական հարուածները ձախողած են նախկին իրավիճակը վերականգնելու իրենց փորձին մէջ. քազմակուսակցական դրութիւնը, ինչպէս եւ այլ պատճառներ, արգելք եղած են:

Նոյնպէս ձախողած են պատմութեան թրքական տեսակետի երկու մեկնաբանութիւնները: Առաջինը՝ համարկողական (ինտեգրացիոնիստ), թրքականութիւնը պարտադիր կը նկատէր, երկրորդը՝ քացառական (էքսկլուզիոնիստ), զայն կը վերապահէր «արիւնով» թուրքերուն: Քիւրտերու առջեւ երկու այլընտրանք կար՝ պարտադրանք կամ բնաջնջում, քայց ոչ մէկը յաջողած է: Այսօր, կ'ըսէ Պոզարյան, հին «միլլէթ» եզրը կը փրկէ կացութիւնը, քայց անոր երկդիմի նշանակութիւնը («ազգ» եւ «համայնք») ցոյց կու տայ քեմալականութեան ժամանակակիցութիւնը:

Պեշիկճիի գիրքը չի շոշափեր այս հարցերը, այլ կ'անդրադառնայ թրքական համալսարաններու եւ գիտական հաստատութիւններու խաղացած դերին: Կը քննադատէ նաև թրքական ձախ հոսանքները պետութեան գաղափարախօսութիւնը հասկնալու իրեն անկարողութեան համար: Պեշիկճի, կը նշէ Պոզարսլան, չի յաջողիր նկատել «տեսութեան» կապը հայերու եւ յոյներու ճակատագրին հետ: Գիրքը կը կաղայ վերլուծումներու նեղմտութեան եւ բառապաշարի վիճելիութեամբ:

Պոզարսլանի յօդուածէն բխող լռելեայն հետեւութիւն մըն է, մեր կարծիքով, Թուրքիոյ արդիական ու ժողովրդավար երեւոյթին շատ հաւատք չընծայելը, քանի որ քեմալականու-

թեան ձախողութիւնը չ'ենթադրեր անկէ հրաժարումը, ինչպէս եւ չմտածել, որ անոր ծաւալումի ախորժակներուն ետեւ անպայման համաթրքական ուրուականը ներկայ է: Կ'օգտագործուի, վստահաբար, քայց մղիչ ուժը չէ:

Գրախօսուած երկու ուսումնասիրութիւնները ցոյց կու տան ոչ միայն «անհանգիստ», այլ նաեւ մտաւորական «անհանգստութիւն» պատճառող միտքերու գոյութիւնը: Մեր ներկայ իրավիճակի գաղափարական խնդիրները կը թելադրեն անոնց ուշադիր ընթերցումն ու քննարկումը:

ՎԱՐԳԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Պուէնոս Ալբու